№ 109 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 № 109

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Գովազդներ գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի. տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միօրեայ ժողովրդագրութիւն. Հեռագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Բաթումից. Նամակ Բագուից. Նամակ Շուշուց. Նամակ Արէշի գաւառից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պաշտօնական զեկուցում. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻՕՐԵԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մենք յայտնել էինք „Մշակի" մէջ, որ առաջիկայ 1897 թուին պէտք է ընդհանուր միօրեայ ժողովրդագրութիւն տեղի ունենայ ամբողջ Ռուսաստանում։ Այդ մեծ գործի նախապատրաստութիւնները առաջ են գնում և նորերս հրատարակվեցին ժողովրդագրութիւն կատարելու եղանակի մասին զանազան հրահանգներ և ցուցումներ։ Կովկասի ազգագրական և կենցաղավարական առանձնայատկութիւնները ենթարկել են ընդհանուր ծրագիրը համապատասխան փոփոխութիւններ։ Օրինակ, ծուխը, որ հիմք է եղել մինչև այժմ եղած կովկասեան ժողովրդագրութիւնների համար, մոցրած է ծրագրի մէջ, մինչդեռ Ռուսաստանի ներքին նահանգներում բոլորովին այլ հիմք է ընդունված։

Աչքի առաջ ունենալով, որ գործնականապէս անհնարին կը լինի ժողովրդագրութիւնը կատարել և վերջացնել մի օրվայ մէջ, ինչպէս այդ պահանջում է վիճակագրական գիտութիւնը, որոշված է, որ ամբողջ Ռուսաստանի համար նշանակված ընդհանուր օրը կը ծառայի իբրև հիմնական առանցք բոլոր տեղեկութիւնների համար, իսկ թոյլ կը տրվի այդ տեղեկութիւնները ժողովել մի քանի օրում, կամ գուցէ մի քանի շաբաթում։

Միօրեայ ժողովրդագրութեան աջողութիւնը կախված է ոչ միայն տեղեկութիւններ ժողովողների հմտութիւնից և գործի ամբողջ կազմակերպութիւնից, այլ և հասարակութեան համակրութիւնից և ինտելիգենցիայի աջակցութիւնից։ Այդ պատճառով ուրիշ երկիրներում այդպիսի դէպքերում նախօրօք ծանօթացնում են հասարակութիւնը այդ գործի կարևորութեան հետ գրքոյկներով, դասախօսութիւններով, յօդուածներով, մաքլելի զեկուցումներով։ Երբ ազգաբնակութիւնը համակրութեամբ և հաւատով է վերաբերվում դէպի վիճակագրութիւնը, այն ժամանակ շատ հեշտանում է տեղեկութիւններ ժողովողների գործը թէ արագութեան և թէ ճշգրտութեան կողմից։

Այս անգամվայ միօրեայ ժողովրդագրութիւնը, ինչպէս մի անգամ յիշել ենք, ունի աւելի բարդ ծրագիր, քան նախկին վիճակագրութիւնները, որովհետև բացի ազգաբնակութեան թուից պէտք է ժողովվեն և մի քանի ուրիշ տեղեկութիւններ։ Սակայն եթէ ծրագիրը նոյն իսկ լինէր նեղ և միայն վերաբերվում լինէր ժողովրդի թուին, դարձեալ նա հիմնական նշանակութիւն կունենար, իսկ իր ներկայ կազմութեամբ նա կը տայ մեծ և կարևոր վիճակագրական մի պատկեր Ռուսաստանի ազգաբնակութեան վերաբերութեամբ։

Մասնաւորապէս Կովկասի համար մենք կունենանք վերջապէս ճիշդ թուեր թէ հայերի և թէ մեր հարևան ազգութիւնների մասին և կը պարզենք վիճակագրական մի քանի հիմնական խնդիրներ։ Ունենալով այնուհետև ուրիշ տեղեկութիւններ մեր հողային, կալուածական, ընդհանուր անտեսական, կրթական և այլ խնդիրների մասին, մենք կարողութիւն կունենանք ճիշդ դաղափար կազմել մեր կեանքի և ներկայ դրութեան մասին և մեր դատողութիւնները հիմնել ստոյգ թուերի վրա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

Բերլին, 17 սեպտեմբերի։ Հայ պրոֆէսոր Թումայեան, հրաժարվելով ազատ կերպով ագիտացիա անելու փորձերից, ճանապարհ ընկաւ Շվեյցարիա։

Լոնդոն, 17 սեպտեմբերի։ «Daily News» լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութիւնը կարական ձեռնարկութիւնների է սպասում Անգլիայի և Ռուսաստանի կողմից։ Պալատական կուսակցութիւնը սարսափահար է եղած, որովհետև լուրեր են պատում, որ այդ պետութիւնների միաբան գործողութիւնը վճռված բան է։ «Standard» լրագիրը առաջնորդող յօդուածում ասում է. «Անգլիայի և Ռուսաստանի միաբան գործողութիւնը, եթէ մինչև անգամ գործը սահմանափակվեր բերանացի յայտարարութիւններով, ցանկալի ներգործութիւնը կունենայ։ Քանի որ Անգլիան և Ռուսաստանը միաբան կը սկսեն գործել, մնացած պետութիւնները կը հետևեն նրանց։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Տեղագիր Դեղարքունի ծովազարդ գաւառի». Գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց. Վաղարշապատ. 1895.

Մեծադիր 843 էջերից բաղկացած այս հատորը աշխատութիւնը, որ դուրս է եկել էջմիածնի տպարանից, ստիպում է ընթերցողին հարցնել՝ ինչի համար է հրատարակված այս սուար աշխատութիւնը. ինչի համար են գործ դրված տասնեակ տարիներ, անբաւ թուղթ և թանաք։ Եթէ ընդունենք հեղինակի պատասխանը, թէ նրա նպատակն է եղել ուղղել, սրբագրել և լրացնել Շախխաթունեան, Ջալալեան եպիսկոպոսների և Մանուէլ Գիւմուշխանցի վարդապետի նկարագրութիւնները, կը տեսնենք որ, ընդհակառակը, նա աւելի է դժուարացրել և խճճել գործը։ Մեսրոպը արքեպիսկոպոս գործ է դրել մեծ աշխատութիւն, հաւաքել է բազմաթիւ արձանագրութիւններ, բեռագրեր, պատմական գրաւոր յիշատակներ, բայց այդ ամենը խառնել է այնպիսի անտեղի, անպատակ և աւելորդ նկարագրութիւններով, խօսակցութիւններով, զրոյցներով և դատողութիւններով, որ աշխատութիւնը միանգամայն կորցնում է իր արժէքը և նշանակութիւնը։ Դժուար է մինչև անգամ օգտվել նրանից, իբրև պատմական նիւթից։ Ինքն հեղինակը զգալով իր աշխատութեան այդ մեծ պակասութիւնը, ասում է. «գուցէ հարկից ըստիպուած՝ տեղագրութեանս մէջ գրուած լինեն անչնորհք բառեր և բաներ, բայց այնպիսի գրքուածներն ևս իրենց սիրողները կունենան»։ Գրել մի ամբողջ անգին աշխատութիւն և նրա մէջ մտցնել անչնորհ բաներ այն յուսով, թէ այդ անչնորհ բաներն էլ սիրողներ կունենան և կը կարդան, դժուար թէ այդպիսի արամաբանութեամբ կարելի լինի բարձրացնել գրքի արժէքը։ Եթէ տեղագիրը կիսով չափ և գուցէ աւելի կրճատվէր ու նրա մէջ մնար միայն յիշատակարանների, արձանագրութիւնների, բեռագրերի, և վիճակագրական տեղեկութիւնների ժողովածու, այդ ժողովածուն գուցէ ունենար փոքր ի չատէ արժէք։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Սեպտեմբերի 12-ին

Նաֆթային գործարանները թէև ձմեռվայ երկարատև դադարումից յետոյ ահա մի քանի ամիս է ինչ սկսել են գործերը, բայց և այնպէս քաղաքի մէջ, թէ առևտուրի և թէ ընդհանրապէս ուրիշ գործերում, չէ նկատվում այն կենդանութիւնը, որ սիրում էր առաջին տարիներում։ Ընդհանրապէս, ամեն ինչ դանդաղ ընթացքի մէջ է։ Գործարաններում բանուորների օրավարձը զգալի կերպով պակասել է. դրա պատճառն այն է, որ մի կողմից Թիւրքիայից գալիս են գործ որոնող գաղթականներ, իսկ միւս կողմից չրջակայ գիւղերի վրացիներն էլ, իրանց դաշտային գործերը վերջացնելուց յետոյ, ահագին քանակութեամբ թափվում են այստեղ և ցրվում գործարաններում մշակութիւն անելու մինչև գարուն։

Արտասահմանից եկող բոլոր չոգենաւերը, ինչպէս ասում են, բերանից բերան լի են գաղթականներով։ Դուրս գալով չոգենաւերից, նրանք, մեծ մասամբ անտէր մնացած այրի կանայք, իրանց երեխաներով, ցրվում են քաղաքի յետ ընկած և խուլ ու խնաւ անկիւնները։ Բակերում գետնի վրա չինված փայտէ տնակները նորից սկսեցին մեծ արժէք ստանալ. նրանց վարձը կրկնապատկվել ու եռապատկվել է։ Այդ տեսակ տեղերում են ապրում եկողները։ Մեր քաղաքում, այդպիսի մեծ կարիքի պատճառով, բացվել են և բացվում են փոխատու կասսաներ։ Առաջին օրինակ տուողը մի հարուստ կալուածատէր է։ Գաղթականները նրանց են յանձնում իրանց հետ բերած փոքր ի չատէ արժէքաւոր իրերը։

Տեղիս հայ թատրոնասէրները մտածում էին եկող հոկտեմբեր ամսին մի ներկայացումով տօնել թատրոնի գոյութեան տասնամեակը, բայց ներկայ հանգամանքների պատճառով հասարակութեան տրամադրութիւնը տեսնելով, վճռեցին յետաձգել մի ուրիշ ժամանակի։

Խտրութիւնը ամեն մի գործում և վէճերը թէ քաղաքային վարչութեան մէջ, թէ բանկերում և թէ մասնաւոր կապակցութիւններ վերցնելու մէջ քանի գնում աւելի և աւելի սուր կերպարանք է ստանում վրացիների և հայերի մէջ, որ երկու կողմի համար էլ շատ պախարակելի է։ Որքան և չուզենայինք մասնաւոր դէպքերին ընդհանուր նշանակութիւն տալ, այնու ամենայնիւ, այդ մասնաւոր դէպքերը առաջ են բերում այնպիսի պայմաններ, որ հարևան և իրար վիճակակից ազգերի մէջ շատ անգամ շահերի չնչին տարբերութեամբ ծագած վէճերը դժուար, և նոյն իսկ անհնար է լինում երկար տարիների ընթացքում մոռացման տալ։ Վրացիների և հայերի մէջ տիրող անհաշտութիւնը մեծ մասամբ առաջ է եկել անցած տարիները Թիֆլիսում քաղաքային ընտրութիւնների ժամանակ ծագած վէճերից, և ամեն մի վրացի իր արարքների մէջ արդարանում է նրանով, թէ որովհետև այն ժամանակ հայերը յաղթող հանդիսացան, հետևաբար ինքն էլ պարտաւոր է խտրութիւնը անպակաս պահել և ամեն կերպ աշխատել յօգուտ իր ազգի։ Այդ մասին աւելի երկարօրէն խօսելը թողնելով մի ուրիշ ժամանակի, մենք առ այժմ այսքանը կարող ենք ասել, որ այսպէս թէ այնպէս, եթէ ենթադրենք էլ, որ մի կողմը մեղաւոր է, այդ դեռ չէ նշանակում, որ իրաւունք է տրվում միւս կողմին անհաշտութիւնը անպակաս պահել։ Երկու կողմերի համար էլ անպատաւաբեր է մասնաւոր վէճերին ընդհանուր գոյն տալ և այդպիսով մի անվերջանալի գժտութիւն ստեղծել երկու հարևան ազգերի մէջ։

Գ. Գ.

ՆԱՄԱԿ ԲԱԿՈՒՒԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Շաբաթ, ամսիս 14-ին, տեղի ունեցաւ տղայոց գիմնազիայի հանդիսաւոր բացումը։ Յունի 1-ին գիմնազիայի չինութեան մէջ մաղթանք կատարելուց յետոյ՝ ձմերային կլուբի ընդարձակ դահլիճում, ներկայութեամբ նահանգապետի, տեղական բոլոր բարձրաստիճան անձանց և երկսեռ խուռն բազմութեան տեղի ունեցաւ համառօտ հաշուետուութիւն։ Դիրեկտորի պաշտօնակատար Ա. Պոբէդոնոսցեվի զեկուցումից երևաց, որ լուսաւորութեան մինիստրի թոյլտուութեամբ, ներկայ սեպտեմբերի 1-ից սրաչօնապէս բացվում է վաղուց սպասած գիմնազիան, որը կայսերական բարձրագոյն բարեհաճութեամբ «Կայսր Ալէքսանդր III» անունը պիտի կրի։ Թէ ինչ աստիճան գիմնազիայի պահանջը զգալի է այստեղ, այդ երևում է խնդրատուների թուից։ Խնդրատուների թիւն է 615, որոնցից, տեղի սղութեան պատճառով, ընդունված են միմիայն 575 աշակերտներ։ Այս 575 թիւը, եթէ համեմատելու լինենք Գանձակի, Երևանի, Քութայիսի և Ռուսաստանի բոլոր գիմնազիաների աշակերտների թուի հետ, կը տեսնենք, որ բացի 2—3 գիմնազիաներից, մնացած բոլորից երկու-երեք անգամ աւելի շատ աշակերտներ ունի Բագուի նոր բացված գիմնազիան։ Դեռ առաջին տարին է, և պիտի ունենայ վեց հիմնական դասարան միայն։ Եօթերորդ և ութերորդ դասարանները յաջորդաբար պիտի բացվեն 1897—1898 տարիների ընթացքում։ Ընդունված աշակերտներին դասարաններում տեղաւորելու համար՝ մանկավարժական խորհուրդը անհրաժեշտ է համարում զուգընթացներ բաց անել. այս մասին որոշված է և տեղեկագրված ուսումնարանական հոգաբարձուին, բայց դեռ պատասխան չէ ստացված։ 575 աշակերտներից 330 ռուս են, 151 հայ, 17 թուրք, 44 հրէայ, իսկ մնացածները՝ գերմանացի, վրացի և այլն։

Ինչպէս ժամանակին հաղորդել էի, գիմնազիան, բացի թոշակագրամից, իւրաքանչիւր տարի քաղաքից 12,000 ր. նպաստ պիտի ստանայ։ Տարեկան թոշակագրամի քանակութիւնը դեռ չէ որոշված մինիստրութիւնից։ Մանկավարժական խորհրդի կարծիքով տարեկան 50—60 ռուբլուց աւելի չը պիտի նշանակվի։

Նորաբաց գիմնազիան դեռ նիւթական մեծ կարիքներ ունի։ Կազմած նախահաշիւ համաձայն՝ առնուազն 25,000 ռուբլու պէտք կայ՝ ուսումնարանական անհրաժեշտ պիտոյքներ, ֆիզիկական գործիքներ, հիմնական և աշակերտական գրադարաններ և այլն ձեռք բերելու համար։ Գիմնազիայի վարչութիւնը իր յոյսը դրել է Բագուի հասարակութեան վրա, նրա օգնութեանն է դիմում, նրա աջակցութիւնն է խնդրում։

Տեղիս բէալական դպրոցում նոյնպէս սկսվել է կանոնաւոր ուսումը. աշակերտների թիւը անցնում է 600-ից։ Այս տարի բաւականաչափ աւելացել են աշակերտներ նաև մասնաւոր դպրոցներում. վերջինների թիւը տարուց տարի աւելանում է։ Ներկայ սեպտեմբերից երկու թէ երեք մասնաւոր նոր դպրոց է բացվել. խնդիրներ են տրված և թոյլատրութեան են սպասում ուրիշ նորերը ևս բաց անելու։ Բացվել է մի մանկական պարտէզ ևս։ Ծնողների ընդհանուր իրարանցում է։ Զգտում, աշխատում են օր առաջ տեղ գտնել և երեխաներին այս կամ այն դպրոցում տեղաւորել։

Ն. Դ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Սեպտեմբերի 12-ին

Մեզ հասած տեղեկութիւններից չենք կարող մատնացոյց չանել հետևեալ տխուր փաստի վրա։—Այս ամառ որոշվեցին Խօթայ վանքի կալուածների սահմանները և դատարանական վճռով վանքի ձեռքն անցաւ աւելի քան 42 հազար դեսեատին հող, բաղկացած գիւղերից, արօտատեղերից և մեծ մասը հարուստ, կուսական անտառներից։ Այդ ահագին կալուածքին հսկում է միայն մի անտառային պահապան (объѣздчикъ)։ Այդ «օբեչչիկը» Մահմէդի դրախտի մէջ է համարում իրան և այնքան ապահով է իշխանութիւնից, կծառոյից, նոյն իսկ իր խղճից... որ ամբողջ ամառվայ եկամուտը 36 բուբլի է ցոյց տուել, այն էլ, ինչպէս հաւատացնում են, կրկին յետ վերցնելով երեք ամսվայ իր ռոճկի տեղ։ Այդ դեռ փաստի երեսն է։ Եթէ խորը նայենք՝ կը տեսնենք, որ այդ «պահապանը», որ 36 բուբլին ցոյց է տուել իբրև վառելափայտից գոյացած բաժ, ոչ թէ այրելու փայտ է բաց թողել սրան նրան, 20, 30 կօպէկ ստացել և այդ գումարը գոյացրել, այլ փառաւոր կերպով կարել է տուել անտառը և չինութեան ահագին փայտեր ծախել, մեծ գումար ստանալով, բայց թէ ինչ իրաւունքով,—չը գիտենք։ Սակայն տիրող կարգերի, իրաւունքների, իշխանութիւնների այսպիսի դարում մի «օբեչչիկ» ինչու՞ իրաւունք չը համարէ անտէր կալուածքը իր քէֆի ուղածին պէս չահեցնել, երբ դեռ կօնսիստորիայի վարդապետները հերքումներ գրելով են զբաղված և փառատարներին են դիմում թղթակիցներից վրէժ լուծելու։ Վերջապէս որ օրվայ համար է պահում հոգեւոր կառավարութիւնը իր երևելի չնորհքը, կամ, եթէ կամենում էք—պարտականութիւնը՝ կալուածների կառավարութեան խնդրում։ Մինթէ կարելի է սեփականութեան հետ այդպիսի խաղեր խաղալ, պատճառ բռնելով թէ էջմիածնից կարգադրութիւն չը կայ։ Էջմիածինը պէտք է կառավարէ, թէ կօնսիստորը։—Մեղք են այդ կալուածները...

Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան արդէն հասաւ մեր քաղաքը՝ թեմական դպրոցի տեսչի պաշտօնով։ Չը գիտենք ինչ հիմունքների վրա Մեսրոպ վարդապետը համաձայնվել է այժմեան էջմիածնի հետ «չանել ուսուցիչների մէջ որ և է փոփոխութիւն»։ Էջմիածինը այնքան սուր հնչում է այս նախադասութիւնը, որ կարծես անթեմաներ պիտի գան այն մարդու գլխին, որը կը համարձակվի այժմեան խմբին նոյն իսկ խէթ աչքով նայել։

Տ.

ՆԱՄԱԿ ԱՐԼԷՇԻ ԳԱՒԱՌԻՑ

Մեծ-Սեօգութլու, սեպտեմբերի 10-ին

Սեպտեմբեր ամսի 10-ին, ժամը ուղիղ 8-ին, մեր գիւղում տեղի ունեցաւ մեծ երկրաշարժ։ Երկրաշարժից քանդվեցին մի քանի հին տներ, առանց մարդկային զոհերի. փլվեցին նոյնպէս շատ գոմեր, խոտի դէզեր և մարագներ։ Վնասները չափազանց շատ են։ Երկրաշարժը, որ տեւեց մօտ 5 վայրկեան, սկզբից շատ հանդարտ էր և թեթև, բայց քանի գնաց այնքան ուժեղացաւ, որ տներից մարդ թէ կին, պառաւ թէ ծեր՝ բոլորն էլ դուրս էին թափվել և սպասում էին իրանց տների փլվելուն։ Գիւղը չրջապատող սարերից շատերը փլվել են և ահագին տարածութեամբ ճանապարհները ծածկել, այնպէս որ առ այժմ սայլերով գիւղից դուրս գնալ անկարելի է։ Այգիներում մեծ մեծ ծառեր կոտրվել և շատ տեղեր էլ բոլորովին արմատախիլ են եղել։ Թիւրգեան գեղը երկու տեղ իր ընթացքը փոխել և այլ ընթացք է ընդունել։ Օրինակ, Տէր-Յովսէփեանի այգին, որ առաջ գտնվում էր Թիւրգեանի արևելեան ափում, այժմ գտնվում է արևմտեան ափում։ Փոքր-Սեօգութլուի մէջ Տէր-Գրիգորեանների այգիները, որ առաջ գտնվում էին արևմտեան ափում, այժմ գտնվում են հակառակ ափում։ Իսկ Յովսէփ քոխվի ջրաղացը բոլորովին փլվել է երկրաշարժից՝ տակը թողնելով շատ կան-կարասիքներ, ցորեն, և ալիւրի մեծ պաշար։ Երկրաշարժի տուած վնասները հազարների են հասնում մեր գիւղում։

Կայծակն էլ երկրաշարժից յետ չը մնաց իր վնասներով։ Կայծակից այրվեցին 10 խոտի դէզեր, չորս մարագներ, և վեց կովի հորթեր։ Գիւղի պառաւները այդ պատիժները վերագրում են գիւղի երիտասարդներից մի քանիներին, որոնք գիւղից աղջիկներ են փախցրել. այդ պատճառով իսկ ամբոխը պատրաստվել է պատժել այդպիսի յանդուգն երիտասարդներին։

Մ. Մ. Զ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը պաշտօնապէս դիմել է Թիֆլիսի նահանգապետին՝ խնդրելով միջնորդել ուր հարկն է և թոյլատրութիւն ստանալ հանգանակութիւն բանալու Թիւրքիայից գաղթած բազմաթիւ թշուառ հայերի համար։

Սեպտեմբերի 23-ին, երկուշաբթի, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում կը սկսվի Թիֆլիսի կրէդիտային ընկերութեան նախկին նախագահ իշխան Նապոլէօն Ամատունու և նոյն բանկի հաշուապահ Ամիրաղովի գործի քննութիւնը. նրանք մեղադրվում են իրանց պաշտօններում դեղծումներ անելու համար։ Կը նախագահի դատարանի նախագահ Բիկով. կը մեղադրի՝ պրոկուրորի օգնական Կրասովսկի։ Մեղադրվողների պաշտպաններն են՝ երդուեալ հաւատարմատարներ՝ Օլոչինին և Տէր-Սոեփանով։

Կառավարիչ սենատը որոշել է դատի ենթարկել Գանձակի նահանգի Ա.ԷՀ դատարի դատապետ օգնական Ալէկպէր-բէկ Բաֆիբէկովին, որը մեղադրվում է այն բանի համար, թէ նա, անձնական նկատումներից դրդված, կեղծ ամբաստանութիւն է արել մի անմեղ անձի դէմ։ Բաֆիբէկով մի և նոյն ժամանակ հեռացրված է իր պաշտօնից։

Ինչպէս յայտնի է, վաղուց ենթադրութիւն կայ Թիֆլիսի և Կոջորի մէջ երկաթուղու գիծ անցկացնել։ Այդ գծի շինութեան համար ինժենէր Խայէվի մշակած ծրագիրը, ինչպէս հաղորդում են «Новое Обозрѣніе» լրագրին, հաստատութիւն է գտել ֆինանսների մինիստրութեան կողմից։ Շինութեան համար հարկաւոր դրամագլուխը արդէն հաւաքված է և գիծը պէտք է 11 վերստ երկարութիւն ունենայ։ Ամբողջ ծախսը հաշված է 250,000 բուբլի։

Այն քաղաքներում, ուր քաղաքային գործերը մինչև այժմ վարում էր պոլիցիան, կը թատած քաղաքային վարչութիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կը մտցնվի ոչ վաղ 1897 թվից։

«Русск. Вѣд.» լրագրի թղթակիցը, խօսելով կանոնց կօնդրէսի մասին Բերլինում, ի միջի այլոց ասում է հետևեալը. «Կը թողնեմ իտալուհիների, անգլիուհիների, ֆրանսիուհիների և դանուհիների զեկուցումները, և վերջաբանութեան մէջ երկու խօսք կասեմ մեր երկու հայրենակիցների մասին, թէպէտ և նրանք Ռուսաստանի հեռու սահմանագլխից են եկած։ Fraulein D-r med. Melik-Beglarjanz (բժիշկ օրիորդ Մէլիք-Բէգլարեանց), ինչպէս կոչվում է պրօզրամի մէջ դրանցից առաջինը, հաղորդեց թէ Թիֆլիսում արու ազգաբանակութիւնը մեծ յարգանքով և վստահութեամբ է վերաբերվում կին-բժիշկներին։ Ինչ վերաբերում է հայ կնոջ դրութեանը, նա համեմատաբար նախանձելի է, որովհետև Հայաստանում տղամարդիկ աւելի շատ են կանանցից, և իրաքանչիւր օրիորդ մարդու է գնում։ Այդ խօսքերի ժամանակ, ասում է թղթակիցը, բերլինցի երկու օրիորդներ միմեանց երեսին նայեցին և ժպտացին, որով պարզ ուզում էին ասել, թէ դրանից էլ լաւ բան կը լինի։ Ապա խօսեց բարօնուհի Գրիսպէնբերգ ֆինլանդական կնոջ դրութեան մասին։»

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 11-ին, Երևանի ճանապարհի վրա, հետևեալ դէպքը պատահեց։ Սեմեօնովկա կայարանից դէպի Ելենովկա տանող ճանապարհին՝ վեցերորդ վերստի վրա, օմնիբուսի ձիաները կատաղելով փախչում են. կառապանը անկարող լինելով կանգնեցնել նրանց, օմնիբուսում նստած մարդիկ իրանց ցած են չպրտում և վիրաւորվում են, թէև անվնաս. բայց երկու կին և երկու երեխայ մնում են օմնիբուսի մէջ, որը չուռ է գալիս, տակն անելով կանանց և երեխաներին։ Նրանցից միայն մի ռուս կին սաստիկ վնասվել էր և նրա ոսկորները փշրվել էին, իսկ միւսները անվնաս էին մնացել։ Վիրաւորված կնոջ վերագարձնելով բերում են Սեմեօնովկա. անմիջապէս Դիլիջանից բժիշկ են կանչում, բայց անօգուտ. կինը մի օրից յետոյ վախճանվեց։»

ՐՕՍՏՕՎԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 15-ից սկսած մեր քաղաքի «Բօլշայա Սադովայա» փողոցը կը լուսաւորվի էլեքտրական լուսով։ Իսկ Թիֆլիսը դեռ ոչ միայն գազային լուսաւորութիւն չունի, այլ սովորական լուսաւորութիւնն էլ այնքան աղօտ է, որ փողոցները ընկղմված են մթութեան մէջ։»

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Այս օրերս այստեղ վախճանվեց 70 տարեկան հասակում հայոց եկեղեցու երէցփոխ Եսայի Զարեբեան, որը 12 տարի շարունակ բարեխիղճ կերպով կատարել է երէցփոխի և հոգաբարձուի պաշտօնները։ Զարեբեան կտակել է եկեղեցու բարեզարդութեան համար 400 ր.։»

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 13-ին, տեղիս զինուորական հրամանատարի կարգադրութեամբ, այստեղից ուղարկում են 8 զինուոր Միխայլօվ կայարանը՝ մի խումբ չարագործներին ուղեկցելու մինչև Ախալքալաք քաղաքը։ Հասնելով Բօրժոմի մօտ գտնվող Լիկանի գիւղը՝ զինուորներից չորսը հեռանում են կալանաւորվածների համար հաց բերելու, իսկ մէկը մընում է անտառ հուն հաւաքելու։ Օգտվելով նրանց բացակայութիւնից՝ աւազակները յարձակվում են մնացած երեք զինուորների վրա և ծանր վիրաւորում նրանց, ապա առնելով 7 հրացան փամփուշտներով, փախչում են։ Վիրաւորվածներից երկուսը վախճանվում են։ Ասում են, որ աւազակներից չորս հոգի արդէն կալանաւորված են։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Новое Время» լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պոլսից, որ օգոստոսի 14—17-ի անկարգութիւնների ժամանակ հալածվող հայերին ապաստան էին տալիս բոլոր դեսպանատունները և հիւպատոսարանները, և միայն գերմանական դեսպանատունն էր, որ այդ օրերը պինդ փակել էր իր դռները. այնտեղ և ոչ մի հայ օգնութիւն չը ստացաւ, մինչև անգամ դեսպանատան դռների մօտ կոտորում էին հայերին։ Ռուսաց դեսպանատան, հիւպատոսարանի և չոգենաւային ընկերութեան շինութեան մէջ ապաստան գտնողների թիւը հասնում էր 600-ի, մինչդեռ միւս պետութիւնների ներկայացուցիչները ընդամենը 200 հոգի են պատսպարել։ Ռուսաստանի ներկայացուցիչները այդ 600 հոգու համար Բ. Դռնից ստացան մի ընդարձակ խան. այդտեղ նրանք ապրում էին բոլորովին ազատ, Ռուսաստանի զրօչակի հովանաւորութեան տակ, և իրաւունք ունէին ամեն ժամանակ դուրս գնալ, հեռանալ Կ. Պոլսից։ Նրանց տրվում էին թղթի կտորներ, որոնց վրա գրված էին կնիք և թուահամար. այդ կտորը թղթերն էին ապաստանվածների անցագրերը։ Եւ հիւպատոսարանի թարգմանը այդ միջոցով հսկում էր, որ այդ մարդկանցից ոչ ոք չը վնասվի։ Մի օր յայտնի դարձաւ, որ 8 հայեր անհետացել են։ Հիւպատոսարանի թարգմանը մտաւ բանտերը, ուր թափված էին հարիւրաւոր հայեր, և գտաւ նրանց մէջ անհետացածներին. նրանք թէև ունէին ռուսաց հիւպատոսարանից ստացած թղթի կտորներ, բայց դարձեալ բանտարկվել էին։

Կ. Պոլսում բնակվող ֆրանսիացիները և ֆրանսիական հպատակները գրաւոր կերպով դիմել են ֆրանսիական արտաքին գործերի մինիստրին, խնդրելով միջոցներ ձեռք առնել իրանց կեանքի և գոյքի ապահովութեան համար. մի և նոյնը մտադիր են անել անգլիական հպատակները, որովհետև եւրօպացիների վիճակը Կ. Պոլսում օրից օր կրիտիկական է դառնում։

Բօշֆոր մի որոտալից յօդուած գրեց Հանօտօի դէմ, որի մէջ յանդիմանում է նրան արևելեան հարցի վերաբերմամբ ունեցած անտարբերութեան համար։ Բօշֆոր գտնում է, որ Հանօտօն միանգամայն արժանի է թիւրքաց «չաֆակատ» չքանչանին, որը նա անուանում է «chefékaka»։

Լօնդօնից հեռագրում են «Новое Время» լրագրին. «Times» լրագիրը, թիւրքական դէպքերի առիթով, ամբաստանում է Սալսբիւրիին այն բանի մէջ, որ նա հասցրել է Անգլիային եւրոպական պատերազմի չէմքը և խորհուրդ է տալիս յետ նահանջել։ Ցորիական միւս օրգանները խոստովանում են Անգլիայի անզօրութիւնը։ Իսկ ազատամիտները գործ են դնում իրանց բոլոր ջանքերը դաւառներում, որտեղ ջերմ աջակցութիւն են գտնում, որպէս զի իրանց ետեից քաշ տան ամբողջ անգլիական ազգը և տիպեն կառավարութեան գործել առանց միւս պետութիւնների աջակցութեան։ Շատ մեծ յոյս ունեն դրած այն տպաւորութեան վրա, որ առաջ պէտք է բերի Լիվերպուլի միտինգը և Գլադստոնի ճառը։ Մակկոլ խորհուրդ է տալիս դիմել սուլթանին ուլտիմատումով և գրաւել Զմիւռնիան»։

«Новости» լրագրին հեռագրում են. «Մարսէլում հաւաքվել են մօտ հազար թշուառ հայեր։ Տիկին Վիլլար Լօնդօնից Մարսէլ եկաւ՝ հայերին Ամէրիկա գաղթեցնելու նպատակով։»

Պարիզից «Новости» լրագրին հաղորդում են. «Figaro» լրագիրը, հրատարակելով Գլադստոնի նամակը հայոց հարցի առիթով, նկատում է, որ նախկին պրէմիէրի առաջարկած միջոցները վնասակար են եւրոպական խաղաղութեան համար։

Մարսէլ հասած 17 հայերից, որոնք օսմանեան բանկն էին մտել, Կարօ և Հրաչեայ պարագլուխները ժընէվ են ուղարկված, իսկ մնացածները—Բուէնոս—Այրէս, չը նայելով նրանց սաստիկ բողոքներին։ Մինչև վերջին րոպէն նրանք կարծում էին, որ իրանց Նիւ-Եօրկ կուղարկեն։ Ֆրանսիական ոստիկանութիւնը յայտնեց նրանց, որ եթէ նրանք հանգիստ չը պահեն իրանց, նորից Մարսէլ կուղարկվեն և այնտեղ կը բանտարկվեն։

Սեպտեմբերի 7-ին (19-ին) Կ. Պոլսում ձերբակալվեցին հայկական գաղտնի դաշնակցութեան 43 անդամներ։ Յայտնվեց, որ հայկական կոմիտեի գանձապահ է «Աբդուլահ եղբայրներ» պալատական ֆոտոգրաֆիայի կառավարիչը։

Տունէլ-խանում արձակած հրացանը, որ վերագրում էին հային, ինչպէս երևում է, թիւրքաց ժանդարմն էր արձակել՝ որպէս զի կարուզանայ ոստիկանութեան կողմից կասկածված ատամնաբոյժ Շերբաթեանին կալանաւորել. վերջինը, սակայն, տանը չէր, որի պատճառով և ժանդարմի ջանքը ապարդիւն անցաւ։

Հռօմից արտասահմանեան լրագիրներին հեռագրում են սեպտեմբերի 6-ից. «Այստեղ կարծում են, որ սուլթանին, որի անձնական վարմունքը բոլոր պետութիւնները լուրջ արգելք են համարում Թիւրքիայի մէջ կարգ և կանոն մըցնելու համար, մէկ ուլտիմատում կը յանձնվի՝ պահանջելով անյապաղ ընդունել դեսպանների առաջարկը, որովհետև հակառակ դէպքում պետութիւնները հանգամանքներին համապատաս-

խան միջոցներ ձեռք կառնեն։ Որպէս զի, եթէ կը պահանջվի, իսկայն խօսքից կարելի լինի գործին անցնել, պետութիւնները վճռեցին իրանց էսկադրաները ուղարկել Բէզիկի ծոցը և դնել նրանց դեսպանների տրամադրութեան տակ։ Իտալական էսկադրան, որ բաղկացած է երեք նաւերից, փոխ ծովակալ Կանէվարոի հրամանատարութեան տակ, վաղը մտնում է ծովը։»

—

«Nord» լրագիրն ասում է, որ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ ծագած մաքսային տարաձայնութիւնները ոչինչ ազդեցութիւն չեն կարող ունենալ այն համաձայնութեան վրա, որ կայացել է հայոց հարցի առիթով եւրոպական պետութիւնների մէջ։

—

Նուբար-փաշան, եւրոպական լրագիրների խօսքով, 400 ֆունտ ստէրլինգ է նուիրել հայկական ֆոնդին։

—

«Новое Время» լրագրի վերջին համարում մի չատ բնորոշ թղթակցութիւն է տպված Կ. Պոլսից։ Վերջապէս այդ լրագրի թղթակից Մոլչանով սիրտ արաւ մի օր ներկայացնել իրերը այնպէս, ինչպէս կան և ճշմարտութիւնը խօսել։ Մոլչանով նկարագրում է բարձրագոյն դատարանը, որը սուլթանի հրամանով հաստատվել է՝ կոտորածի յանցաւորներին գտնելու և պատժելու համար։ Ահա ինչ է գրում հայատեաց թղթակիցը։

«Երբ Եւրոպայի ներկայացուցիչները Բ. Դրան ուշադրութիւնը հրաւիրեցին հայերի երկամեայ անդադարատան հալածանքի վրա, այն ժամանակ սուլթանը, կամենալով ջնջել այն տպաւորութիւնը, որ առաջ էր բերել պետութեան կողմից կազմակերպված փողոցային կոտորածը, խոստացաւ մի տեղ հաւաքել թիւրքիայի ամենալաւ դատաւորներին և կազմել նրանցից մի առանձին բարձրագոյն դատարան՝ որոշելու անմեղներին և յանցաւորներին անցած արիւնահեղ անկարգութիւնների ժամանակ, և այդ քննութիւնը որպէս թէ հաւասար պէտք է լինէր քրիստոնեաների և մուսուլմանների համար։ Սուլթանը կատարեց իր խոստումը և դատաւորներ նշանակեց չորս քրիստոնեայ, չորս մահմետական, նախագահը և պրոկուրորը մուսուլման։

«Մենք գնացինք դատաստանը տեսնելու։ Մինչև այսօր այդ բարձրագոյն դատարանը, որ կայացնում է վերջնական վճիռներ առանց բողոքի և կասացիայի իրաւունքի, ոչ նիստ է ունեցել։ Ամենից առաջ սկսեց քննվել մի կիսավայրենի քիւրդի գործ, որը մեղադրվում էր այն բանի մէջ, թէ խանչալը կոխել է գետին ընկած հայի մարմինը կոտորածի առաջին օրը։ դատարանը որոշեց, թէ գետին ընկած հայը արդէն մեռած էր, ուստի և նրա մէջ խանչալի մխելը մի անմեղ զբաղմունք է եղել, և ոչ յանցանք. այդ հիման վրա քիւրդը անմեղ ճանաչվեց և ազատվեց։ Յետոյ քննվեց հինգ մեղադրված հայերի գործը. նրանց գտել էին, թէև առանց զէնքի, այն տան մէջ, որտեղից ռումբ էին նետել։ Ոչ ոք չէր կարող ասել հաստատապէս, թէ հէնց այդ թշուառներն են գցել ռումբերը կամ նոյն իսկ տեղեկութիւն են ունեցել նրա մասին։ պրոկուրորը պահանջեց և դատարանը դատապարտեց բոլոր հինգ հայերին մահուան պատժի։ Երրորդ գործով չորս հայեր մեղադրվում էին այն բանի համար, որ նրանց կալանաւորել էին մի տան մէջ, որտեղից հրացան էր արձակվել և որտեղ, բացի այդ չորս հայերից, գտել էին ուրիշ չորս հայերի դիակներ։ Բարձրագոյն դատարանը դատապարտեց բոլոր չորս հայերին մշտական բանտարկութեան բերդի մէջ։» Լաւ է, որ Մոլչանով, թէև ուշ, բայց վերջապէս հասկացաւ, որ թիւրքերը միշտ կոմէդիա են խաղում և ծաղրում Եւրոպան։

—

Անգլիայի և Ռուսաստանի միաբան վճռական գործողութեան մասին դեռ մի քանի ժամանակ առաջ լուրեր էին պատում։ Ահա ինչ ենք կարդում այդ առիթով «Новое Время» լրագրում։ «Անգլիական չատ լրագիրներ, մանաւանդ ազատամիտ բանակից, չարունակում են մեծ յոյսեր դնել Բալմորալի տեսակցութեան վրա։ «Daily News» լրագրում տպված է մի երկար յօդուած, որի մէջ հաստատ յոյս է յայտնվում, թէ այդ տեսակցութիւնները կատարեալ աջողութեամբ կը պակվեն։ Լորդ Սոլսբիրի այժմ իր ամբողջ քաղաքական բաղդը խաղի է դնում. նա պէտք է համոզի Ռուսաստանին, որ անհրաժեշտ է ազատել աշխարհը նրան լափող վարակիչ ախտից, այն է թիւրքայ կառավարութիւնից։ Անգլիան չատ բանում մեղաւոր է Ռուսաստանի առաջ, նա քիչ վնաս չը հասցրեց նրան 1878 թ-ին Բէրլինի կոնգրէսում, բայց այդ բանի մէջ չէ կարելի մեղադրել ամբողջ անգլիական ազգը։ Հակառուսական քաղաքականութեան մէջ գլխաւոր յանցաւորը լորդ Բիկոնսֆիլդն էր, որի յիշատակը չատ էլ թանգ չէ անգլիացիներին։»

—

«Daily News» լրագրում տպված է նորերս կալանաւորված հայերի ցուցակը։ Նրանց մէջ չատ հարուստ և ինտելիգէնտ անձինք կան— բժիշկներ, վաստակաւորներ, ուսուցիչներ և մինչև անգամ աշակերտներ։ Սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսից Պարիզ են հասել չատ հայեր։ Եկողներն ասում են, որ Ամէնքում 1500 հայերից աւելի են հաւաքվել։ Այդքան էլ Մարսէլում։

—

Կ. Պոլսից հաղորդում են «Бирж. Вѣд.» լրագրին, թէ այնտեղ տարածված լուրերին նայելով, պէտք է հաստատվի միջազգային ոստիկանութիւն, որի մէջ և ռուսական։ Նորերս մի այսպիսի դէպք պատահեց։ Գիշերով ոտի հոգի յոյներ գնում էին փողոցով և իրանց մէջ խօսում էին հայերի կոտորածի մասին, յաճախ գործածելով «հայ» բառը։ Պահակ զինուորները կարծելով թէ նրանք հայեր են և օգուտ քաղելով գիշերվայ մթութիւնից, սպանում են նրանց և դիակները գցում ջուրը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՒՄ

—

«Բարձրաշնորհ Պատրիարքական Տեղապահ Սրբազան Հայր՝

«Մեք ստորագրեալքս՝ Կ. Պոլսոյ թաղերու թաղական խորհրդոց Ատենապետքս և ներկայացուցիչքս՝ այսօր Ձեր Բարձր Սրբազնութեան հրաւիրանաց համաձայն ժողովք կազմեցինք և Ձեր Սրբազնութենէն լսեցինք կայսերական կառավարութեան նա մանաւանդ մեր Վեհափառ Սուլթանին՝ վերջին դէպքերուն առթիւ և մինչ օրս ցուցացած հոգածութիւնները որ, ինչպէս ամեն ժողովուրդի Կոստանդնուպոլսոյ և ի մասնաւորի հայոց ապահովութեան նկատմամբ տրուած է, որոյ համար յատուկ շնորհակալութիւն և երախտագիտութիւն կը յայտարարեմք և այս յատիւ կը բողոքենք այն կարգ մը չարամիտ անձանց արարքներուն դէմ որք յանուն Հայ Ազգին վերջին դէպքերուն տեղի տուին։ Մեք ընաւ անոնց համամիտ չըլլալէն զատ կանգոնենք անոնց արարքը և կը փափաքինք որ այդ կարգ մը չարաչարները մեղի հետ, այսինքն հայ ժողովրդեան ընդհանրութեանը հետ չը դասակարգուին, այլ իբրև չարագործներ իրենց արժանի պատիժը տրվի ամենայն խստութեամբ։

«Հայ ազգը հինգ վեց հարիւր տարիներէ հետէ հաւատարիմ գտնված է հանդէպ Օսմանեան Պետութեան և իւր հաւատարմութեան ապացոյցներն Ֆէրմաններով, Պէրաթներով հաստատեալ և մեր նախահարց և հարց օրէն և մեք մեր նախնեաց զաւակներն ու անոնց արժանի յաջորդներն լինելով, չէր կարելի տարբեր վիճակ մտնենալ։

«Մեք՝ ինչ որ Օսմանեան անցեալ Օգոստափառ Սուլթաններն, նա մանաւանդ ներկայ Օգոստափառ Սուլթանն ես չնորհած է, որ կը վայելեմք, այն է մեր կենաց, պատուոյ և ընչից կատարեալ ապահովութիւնը, մեծ յոյս կը տածեմք որ յաւիտեան պիտի վայելեմք ընդ բարձր հովանաւորութեամբ Օգոստափառ Սուլթանին մեր Հօր։

«Այն ամեն անոնք, որք ասոնցմէ դուրս խընդիրներ կը յերիւրեն և մեր հայ ազգին ընդհանրութեանը կը վերագրեն, և որ դժբաղդաբար մի քանի օտար լրագիրներ այսպէս յերիւրեալ խնդիրներ կը թարգմանեն ու կը ճգնին հաստատել, որպէս զի հինգ վեց հարիւր տարիներէ հետէ մէկտեղ եղբայրաբար կենակցած, անած, մեծցած երկու ազգերն իրարու դէմ յարուցանելու տեղի տան։

«Կը բողոքենք ասոնց դէմ և կը փափաքինք որ ընաւ կարեւորութիւն չի տրուի այդ կարգի անձանց խօսքերուն և հրատարակութեանց և կը խնդրենք Ձեր բարձր Սրբազնութենէն որ մեր այս անկեղծ խոստովանութիւնները և հաւատարմական զգացումները յատուկ Կայսերական Բարձր Գահոյից մատուցանէ։

(Ստորագրութիւնք երեսունը չորս Թաղական Խորհրդոց Ատենապետներու)

Բերա, Ս. Երրորդութիւն

Եկեղեցւոյ Խորհրդարան 30 Օգոստ. 1896

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, սեպտեմբերի 2-ին

Վասպուրականում այս տարի քիւրդերի կատարած կոտորութիւնները և անցեալում Շէյխ Իբրահիմի արշաւանքն աչքի առաջ ունենալով, պարսից կառավարութիւնը այս ամառ Սալմաստում, իբրև Վասպուրականին հարևան գաւառում, հաւաքել էր մի քանի հեծելավաշեր, որոնք եկել էին Պարսկաստանի զանազան գաւառներից։ Պարսից զինուորին կառավարութիւնը չէ կերակրում, այլ տալիս է ամեն մէկին օրական մէկ կօպէկ։ Օրէնքով ամեն մի զինուոր պիտի ստանայ վեց կօպէկ, բայց մինչև նրան հասնելը այդ գումարը հալվում, պակասում է մինչև մէկ կօպէկ։ Ի դէպ, իր գահակալութեան առիթով նոր Թագաւորը ընծայում է ամեն մի զինուորի երկու բուբլի, որը նոյն ձևով պակասելով, դառնում է 20 կօպէկ։ Այդ պատճառով զինուորը ստիպված է լինում կողմնակի կերպով իր օրվայ պարէնը հայթայթել և դիմում է գողութեան և աւազակութեան։

Այս տարի Սալմաստի ժողովուրդը՝ պարսիկ, հայ, ասորի անխտիր՝ մեծ վնասներ քաշեցին զինուորների ձեռքից։ Մի գիւղացու առոյտն են տանում, միւսի ոչխարը, երրորդի ժամացոյցն են ճանապարհին խլում կամ գրպանը դատարկում։ Չորս զինուոր մտնում են մի պարսկի այգին, տիրոջը դուրս վռնդում, իսկ իրանք ըսկսում են այնտեղ ապրել, այգին ջրել, քաղահան անել, իսկ հասած խաղողը կամաց-կամաց ծախել։ Կին բռնաբարելու և մարդիկ վիրաւորելու դէպքեր էլ են պատահել։ Ժողովուրդը անճարացած՝ ոչ կարողանում է գանգատվել և ոչ էլ ինքն իրան պաշտպանել, որովհետև երկու դէպքումն էլ զանազան քաղցած դատաւորներ, մամիւռներ, ռէյսեր յարձակվում են ՀԷնասված գիւղացու գրպանի վրա, այնպէս որ խեղճը ստիպված է լինում լուռ տանել սարվաղի բոլոր արարքները։

Պարսից զինուորը որքան գող է, այնքան էլ պարծենկոտ է։ «Մենք հրացանի հետ այնքան էլ սէր չունենք, ասում է նա, մեր ձեռքին միայն կադարա (դաշոյն) լինի, մենք դուրս կը գանք մինչև Մոսկով. իսկ քիւրդը ինչ է, որ մեր առջևը դիմանայ... Բայց այդ անիրաւները կուլ ժամանակ վազում են սարի պակին, քարերի ետևում նստում ու հրացանը դէպի քեզ ուղղում. դէ ինչ ու նրանց ետևից գնա ու սարը բարձրացիր. այդպիսի բան կարելի է. գիւղ տեղ չեն կանգնում, որ գնաս վիզը կոդարայով կըտրես։» Չեմ իմանում որքան քաջ են պարսիկ զինուորները, միայն ժողովուրդը իմօրով պատմում է մի անեկդոտ, երբ խօսք է բացվում նրանց մասին։ Ասում են, մի քիւրդ մի սարվաղ է պլոկում. ընկերները նախատում են նրան, թէ ինչու չը պաշտպանվեց, երբ զէնք ունէր մօտը.—«Զեռքերս թափուր չէին, սրտնեղութեամբ պատասխանում է սարվաղը, մի ձեռքումս ատրճանակ, միւսումը դաշոյն, ծնօտովս խփեմ։»

Չը նայած որ այդքան զինուորական ոյժ կար երկրում, չը նայած որ Դիլմանում հաւաքված էին Ուրմիի նահանգապետը, խոյի գաւառապետ—դատաւորը և երկրի դատաւորը իրանց հարիւրաւոր ձիաւորներով, այնու ամենայնիւ, տեղական վարչութիւնը չը կարողացաւ ձերբակալել Շեկակ քիւրդերի ցեղապետ Մահմադ աղային, որը Սալմաստումն էր գտնվում այդ ժամանակ և մրցում էր նոյն ցեղի միւս ցեղապետ Ղասըմ-աղայի հետ՝ առաջութեան պաշտօնը ստանձնելու համար պարսից կառավարութիւնից։ Այդ Մահմադ աղան չատ չարագործութիւններ է արել. ասում են, իր կեանքում հազար պարսիկ զինուոր կը լինի սպանած։ Այդ աղայի մարդիկ էին, որ այս ամառ պարսից հողի վրա կոտորեցին Վանից դուրս եկած և տաճկական քիւրդերի ձեռքից ազատված հայերին։ Հէնց դրա համար կառավարութիւնը ցանկանում էր ձերբակալել Մահմադ աղային, որը մի այսպիսի քաջութեամբ է դուրս պրծնում պարսիկների ձեռքից, որ արժանի է զովասանքի։ Մահմադ աղան իր որդու հետ կանչված է լինում Նահանգապետի մօտ, ուր եկած է լինում և սօմայցի Ղասըմ աղան, Մահմադ աղայի ախոյեանը։ Այդտեղ վէճ է բացվում երկու ցեղապետների մէջ, և պարսիկները հրամայում են ձերբակալել Մահմադ աղային իր որդու հետ։ Բայց սրանցից ամեն մէկը ներկայ գտնվող միրզաներից մէկ-մէկ գրկած, իբրև վահան, բարձրանում են կտուրը, այդտեղ թողնելով միրզաներին՝ ցատկում են փողոցը, ձի նստում ու անհետանում։ Այդ խառնակութեան ժամանակ քիւրդերից սպանվում են երկու հոգի, իսկ զինուորներից մի քանիսը։ Հէնց այդ անպտղութեան համար պատճառանք է լինում խոյի գաւառապետ Բաղր-խանը։

Բայց պարսիկների վախը իզուր էր, քիւրդերը ձեռք չը տուին Սալմաստին. նրանց այժմ անզէն խեղճ աղբակցիներին է պատում։ Աղբակցիները չը դիմացան քիւրդերի հասցրած հալածանքներին, փախան, եկան Սալմաստ. այժմ մօտ երկու հազար հոգի ամեն ինչ կորցրած ցրվել են տեղիս բոլոր հայաբնակ գիւղերում, մի մասը մշակութեամբ է պարապում, միւս մասը դատարկապորտ օր է անցկացնում, չունենալով գործի կոչել։ Անցեալ օրերը Թիւրքայ չահրանդանը (հիւպատոսի օգնականը), որը միշտ նստում է խոյում և եկել էր Սալմաստ, կանչում է այդ գաղթականներից չատերին, հիւրասիրում է, ամեն մէկին բաժանում է 10 կօպէկ և խորհուրդ է տալիս հայրենիք վերադառնալ, երաշխաւորելով որ քիւրդերը նրանց ձեռք չեն տայ։ Աղբակցին լաւ է հասկանում թիւրքի արած բարի խորհուրդի իմաստը և պարսից հողից չէ հեռանում։ Այդ գաղթականների մասին մտածում է և թաւրիզի առաջնորդական փոխանորդ Սարաֆեան, որ այս ամառ չրջում էր իր թեմում, և մանաւանդ երկար մնաց Սալմաստում։ Հայր սուրբը հիւր է գնում տաճկաց չահրանդանի ծառայի տունը, իսկ դրա փոխարէն ինքը չահրանդանը ճաշի հիւր է գալիս փոխանորդի մօտ։ Ցեռայ Սարաֆեան այցելում է և Ուրմին։

Մխ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սալմաստից մեզ գրում են սեպտեմբերի 2-ից. «Անցեալ օր Աղբակի կարատանը լուր բերեց, որ Զուլամերիկի լեռնաբնակ ասորիները աւերել են մի քանի քիւրդական գիւղեր և բընակիչներին բոլորին կոտորել են. կառավարութիւնը ուղարկել է ասորիների դէմ զօրք և թնդանօթներ»։

—«Nord» լրագիրը յայտնում է, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրի նշանակվելը տեղի կունենայ միայն Թագաւոր Կայսրի Ռուսաստան վերադառնալուց յետոյ։

—Սուլթանը ստացել է Կրետէից մի ուղերձ, որ ստորագրել են 10,550 կրետացի մուսուլմաններ։ Այդ ուղերձի մէջ ասված է, թէ Կրետէ կղզին, որը Թիւրքիան ձեռք է բերել արեան գնով, չի վերադարձնվի Յունաստանին խաղաղ ճանապարհով և կրետացի մուսուլմանները կը պաշտպանեն իրանց իրաւունքները։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՒՑ

—

ՎԱՐՇԱՎԱ, 16 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 15-ին, ցուցահանդիսային մասնաժողովի ներկայութեամբ, գեներալ-նահանգապետի օգնականը պարգևներ բաժանեց առողջապահական ցուցահանդիսի համար, որի փակումը տեղի կունենայ հինգշաբթի։

ՄԻՆՍԿ, 16 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 15-ին ազնուականների շինութեան մէջ բացվեց մրցապատութեան, բանջարապատութեան, ծաղկաբուծութեան և անասնապատութեան ցուցահանդէս։

ՅԱՐԻՅԻՆ, 16 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 14-ին, Կազանի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, ժողովրդական դպրոցների դիրեկտորի, տեղական գիմնազիաների ուսուցիչների և աշակերտների, բազմի ներկայացուցիչների և տնազին բազմութեան ներկայութեամբ բացվեց արհեստագիտական դպրոց փակնոգործական և խառատային բաժանմունքներով։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 16 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 15-ին Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնա իր Օգոստափառ Երեխաների հետ ճանապարհ ընկաւ Լիբաւա։

ՎԻԼՆԱ, 17 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 14-ին, լուսաւորութեան մինիստրութեան կարգադրութեամբ, միչնակարգ դպրոցներում հոգեհանգիստներ կատարվեցին Նիկոլայ I կայսրի համար։ Ընթերցանութիւններ կազմվեցին և Տէր հանգուցեալ կայսրի յիշատակին։

ՄՕԳԻԼԷՎ, 17 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 16-ին թագուհի Մարիա Ֆէոդորովնա Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ «Полярная Звѣзда» նաւով աջողութեամբ ժամանեցին Կոպենհագենից Լիբավան նաւահանգիստը։ Տեղափոխվելով կայսերական գնացքը, կայսրուհին Օգոստափառ Երեխաների հետ բարեհաճեց ճանապարհ ընկնել Աբասթուման Օլէսա-Բախչիսարայի վրայով։

ԲԱԼՄՕՐԱԼ, 17 սեպտեմբերի։ Եղանակը չատ լաւ է։ Թագաւորը, անգլիական պրինցները, կոմս Վորոնցով-Դաշկով և իշխան Գոլիցին օրսի էին։ Կայսրուհին և Թագուհին զբօսանք արին կառքով։ Մարկիզ Սոլսբիւրի և Սատալ իր աղջկայ հետ հրաժարվեցին այսօր թագաւորական ճաշից։

ԼՕՆԴՕՆ, 17 սեպտեմբերի։ «Times» լրագրին Կայրէից հաղորդում են. «Տեղական չբրջանները բացարձակ պատմում են, որ խէդիվը Եւրոպա տարաւ Եգիպտոսի անկախութիւնը հրատարակելու ծրագիրը։ Այդ յատակագիծը,—ասում է «Times»—մշակվել է խէդիվի ցուցմունքով, հինգ պաշտօնական անձանց ձեռքով, որոնք հոչակ են ստացել չնորհիւ իրանց ինտրիգների՝ գոյութիւն ունեցող կարգերի դէմ։ Այդ լուրը, որ, անկասկած, զուրկ չէ հիմքից, յուզիչ ներգործութիւն է առնում և ապացուցանում է, որ գաղտնի փորձեր են լինում անգլիական բէֆորմները չնչելու համար։ Ադիտասօրների թիւը չատ մեծ չէ, մանաւանդ որ նրանց գործունէութեան եղանակը դատապարտում է տեղական ազգաբնակութեան լաւագոյն մասը, բայց նրանք վայելում են խէդիվի չնորհները։ Թէպէտ խէդիվը հաւատացնում էր, թէ ինքն մտադրութիւն ունի հանդատանալ Շեկյարիայում, բայց նա, այնու ամենայնիւ, գնաց Պարիզ և այնտեղ տեսակցութիւն ունեցաւ Հանոտօի հետ։

Սեպտեմբերի 16-ին հասաւ այստեղ Լի-Խունգ-Զանգ և, ոչ սրին չընդունելով, իսկոյն ճանապարհ ընկաւ Ցեանցզին։

ՇՎԷՅԻՆ, 17 սեպտեմբերի։ Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնա ճանապարհ ընկաւ Պարիզ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 17 սեպտեմբերի։ Մանաժողովը, որին յանձնված է օտար ժարնալիստների ընդունելութիւնը, գիմաւորեց նրանց Օրշովում, իսկ այսօր ի պատիւ նրանց բանկէտ կազմեց։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 17 սեպտեմբերի։ Ֆրանց-Յովսէփ կայսրը և Կարլ թագաւորը ժամանեցին այստեղ։ Բազմաթիւ ամբոխը ողողված ազգակներով դիմաւորեց նրանց։ Քաղաքագլուխը մատուցեց կայսրին աղ ու հաց և մի ճառ արտասանեց, որի մէջ փառաբանում էր կայսրին, որպէս զօրեղագոյն թագաւորին, որ աշխատում է ժողովրդի բարօրութեան անհրաժեշտ խաղաղութեան համար։ Կայսրը պատասխանեց, թէ ինքն զբաղված է այդ սրտագին ընդունելութիւնից։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 17 սեպտեմբերի։ Ֆրանց-Յովսէփ կայսրը գնաց աւստրո ունգարական դեսպանութիւնը, որ ընդունեց կաթոլիկ հոգևորականութիւնը, դիպլոմատիական մարմինը և պատգամաւորութիւն աւստրո ունգարական կոլոնիայից։ Երեկոյեան հանդիսաւոր ճաշ կար թագաւորական պալատում։ Քաղաքը լուսաւորված է. աղգաբնակութիւնը հիացած տրամադրութիւն ունի։

ԵՕԿՕՀԱՄԱ, 17 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 16-ին հասաւ այստեղ Լի-Խունգ-Զանգ և ոչ ոքին չընդունելով, իսկոյն ճանապարհ ընկաւ Ցեանցզին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Սեպտեմբերի 17-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	93	ր.	70 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	75 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	—	»	— »
Ոսկի — — արժէ . .	7	»	50 »
Մաքսային կուպոններ — . .	149	»	— »
Բորսային դիսկոնտ — . .	$5^3/_4$	»	$7^0/_0$ »
$4^0/_0$ պետական բէնտա	$98^1/_2$	»	— »
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.	$278^1/_2$	»	— »
— — երկրորդ —	249	»	— »
$5^0/_0$ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$208^1/_4$	»	—
$5^0/_0$ պետական երկաթուղ. բէնտա	$100^1/_2$	—	»
$4^0/_0$ Ներքին փոխառութեան . . .	$98^1/_2$	—	»
$4^1/_2{}^0/_0$ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$100^1/_8$	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խազարկութ.	—	»	—
$4^1/_2{}^0/_0$ վկայակ. գիւղ. հող. բանկի	$100^1/_8$	»	—
Փոխ. կրեդիտ. ընկերութ. մատա. .	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ ընկերութեան օբլիգացիաները.	$101^3/_4$	»	—
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^1/_2$	»	—
Օդէսայի — —	101	»	— »
Թիֆլիսի — —	$98^5/_8$	»	— »
Թիֆլիսի կալ. բանկի $6^0/_0$ — . .	—	»	—
$5^0/_0$ — — — . .	—	»	— »
Բուխարայի — $6^0/_0$ — . .	—	»	— »
$5^0/_0$ — — — . .	—	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վլորոնցովի առձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վենէրական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և չաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և չաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մզի, լեղի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ



Օ. ՍՈՒՐԸ

ՍՈՒՐ ՔԻՆ

Հեռագիրը հաղորդում է, որ ցիրուի խումբը մեկ ամսվա սեպտեմբերի 19-ին։
Հանրի հիմնարկեալ կարգադրեալ ի քաղաքի օրերը։
ԴԻՈՆԻՍՈՍ ՍՈՒՐ

1—1

Լոյս տեսաւ
ԳԷՈՐԳ ԲԱԲՈՒՐԵԱՆՑԻ
կազմած
ՓՈՔՐԻԿ ԶՐՈՅՑՆԵՐ
ԺՈՂՈՎԱԾՈՒՆ։
ԳԻՆԸ 10 ԿՈՊԷԿ
Վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում։
(№ 109) 1—2

Լոյս տեսաւ
ՍՐԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
ՄՈՌԱՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ
ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԸ
Վաճառվում է հեղինակի մօտ, և բացառապէս «կենտրոնական գրավաճառանոցում»։ Դումարով գնողներին զիջումն կը լինի։
Հասցէն՝ редакція «Норъ-Дарѣ», Архидіакону Арутюну Джугурянцъ. (№ 109) 1—3

„ԱՐԱՔՍԻ" ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Որովհետև «Արաքսը» չարունակելու կամ դադարեցնելու վերջնական որոշումը կը պարզվի աչնան վերջերում, ուստի և հանդիսի երկրորդ գիրքը լոյս կը տեսնի դեկտեմբերի վերջին։
Մեր հասցէն՝ Петербургъ, Симеону Гуламирянцу. (№ 108) 2—2

Ղղարից Աստրախան տեղափոխվելուս պատճառով հետս գրագրութիւն ունեցողներին խնդրում եմ հետևեալ հասցէս. Астрахань, священнику соборной церкви, Геворку Мкртумянцъ.
Գէորգ քահանայ Մկրտումեանց
(№ 108) 2—3

ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՄՆԱԶԻԱ ԿՐԷՅՄԱՆԻ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
(Հիմնարկված 1858 թ-ին)
Հասցէն. Պետրովկա. տուն Սամարինայի

Ակակերտները օգտվում են արբունական գիմնազիաների բոլոր իրաւունքներով։ Այս տարվայ մայիսին XXXI չրջանի ակակերտները աւարտեցին գիմնազիան ու ստացան հասունութեան վկայական։ Նոր լեզուների ուսման վրա առանձին ուշադրութիւն է դարձված. դրանց աւանդումն սկսվում է նախակրթարանից։

Գիմնազիայում պանսիոն կայ վերատեսչի անձնական կառավարութեան ներքոյ։

Գիշերօթիկների տարեկան վճարը 700 բուբլի է։ Ակակերտների ընդունելութիւնը ամբողջ սեպտեմբեր ամսվայ ընթացքում։ (№ 108) 2—4

ԿԷՕԼԷՐԵԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ
ԿՕԼԴ-ԿՐԵՄ ԵՒ ԾՐԹՈՒՆՔԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՑ ԻՒՂ
գոյ են տալիս իրանց նշանաւոր առաւելութիւնները նրանց գործածութեան բոլոր դէպքերում։ Ծախվում են ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։ № 79 (8) 3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻԶՈՒՄ)

Ուսումնարանում ընդունվում են երեխաներ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստվում են գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, ռէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած. ընդունելութիւնը կը շարունակվի փոքր-պատրաստականում ամբողջ տարի, միւս դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի երեխաների նախապատրաստութեան համաձայն, նոյնպէս ամբողջ տարի։

Հասցէն. ТИФЛИСЪ. Гановская ул., № 11. 6—10
(№ 102) (ե. հ.)

ԲԱԳՈՒ
Կառավարութեան թոյլտուութեամբ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Պարբերաբար իրաւանչիւր 4—5 ամսից յետոյ)

ԾՐԱԳԻՐ. 1) առևտրական թուաբանութիւն. 2) ՆԱԻԹԱՅԻՆ ԱՐԳԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ, չոգենաւային, առևտրական և բանկային ԿՐԿՆԱԿԻ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ (теорія и практика). 3) թուաբանութիւն համրիչի վրա. 4) առևտրական և մուրհակի կանոնագրութիւն։

Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. պարապմունքները սեպտեմբերի 10-ից։

Դիմել՝ БАКУ, Татарская ул. д. № 30, կամ въ контору Бакинск. отдѣл. «Бр. Цовьяновы и К.»
13—15 (№ 77) (;) Դասատու-հաշուապահ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՍԵՂԱՆԻ ՀՈՏԱՒԷՏ ՄԱՆԱՆԵԽ

Փոչու ձևով, կատարելագէս պատրաստ՝ վայրկենաբար նրանից մանանեխ պատրաստելու համար, գերազանցում է բոլոր դրա նման փոչիներից իր նուրբ համով, հոտաւէտութեամբ և էժանութեամբ։

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ։ № 89 (7) 3—3

ՆԻԿՈՂՈՍՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեոնարդի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեսեռութեան։

Բ.) Առևտրական թուաբանութիւն.

Գ.) Առևտրական նամակագրութիւն.

Դ.) Դեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 16-ից ճաշից յետոյ և պարբերաբար չարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիր մի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ ՖՐԷՅԻՆԵԱՆ փողոց, տուն Սուլթանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզդկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։

ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։

(ե. հ.) (№ 74) 15—15

ԿԱԳԱՕ ԲԼՕՕԿԼԻՐ
ՍԱՆԴԱՐԸ ԽՄԻԶՔ, արկղիկներում, $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ և $^1/_8$ կիլոգրամ։
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թ-ի համաշխարհային ցուցահանդիսում։
Գլխաւոր պահեստը՝ դեղաբարական ապրանքների Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 35—50

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Сентября 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.